

ԶԻՆԱԴԱԴԱՐ՝ ՆԱԵՎ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԵՎ ԵԹԵՐՈՒՄ

Որ արտաքին գործերի նախարարության լրագրողների համադաշնության եւ «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության նախաձեռնությամբ օրերս Մոսկվայում անկապվեց Հայաստանի, ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի լրագրողների մի յուրաքանչեւ հանդիպում Հայկական պարլիտարության վերադարձից հետո՝ «Առավուրի» աշխարակիցը գրուցեց ԼՂՀ-ի ժուռնալիստների միության նախագահ Մաքսիմ Հովհաննիսյանի հետ:

- Բոլոր հակամարտություններն էլ մի օր ավարտվում են եւ գալիս է եթե ոչ բարեկամաբար, ապա գոնե՛ խաղաղ գոյակցելու հարեանության կանոններին ենթարկվելու ժամանակը: Մոսկովյան հանդիպման կարգախոսը դա էր՝ Այդ գործում լրագրողների անելիքը ո՞րը համարվեց:

- Նախ ասեմ, որ ԼՂՀ-ից Մոսկվա երկուսով էինք մեկնել հեռուստառադիոպարլիտարության պետ Գարիկ Գրիգորյանը եւ ես: Հայաստանը նույնպես ներկայացված էր ժուռնալիստների միության եւ հեռուստառադիոյի ղեկավարների մակարդակով: Իսկապես գալիս է մի պահ, երբ ազգամիջյան հարաբերություններում արելության ճանապարհը շարունակելը այլեւս անհնար է դառ-

նում: Այն փանում է փոխնադարձ ժխտման եւ ոչնչացման ի վերջո, դեմ է առնում մի պարի, որից այն կողմ ոչինչ չկա: Իմ կարծիքով, կազմակերպիչները ժամանակին հրավիրեցին այդ հանդիպումը: Արդեն վեց փարի է Ղարաբաղ-Ադրբեջան հակամարտությունն ուղեկցվում է քարոզչական բուռն ինչ-որ տեղ սահմաններն անցնող պայքարով: Այդ բորբոքումը շարունակելն այլեւս ճիշդ չէ: Ջանգվածային լրագրության միջոցներն իրենց վճռական խոսքը պետք է ասեն: Միմյանց դեմ սկսած քարոզչական լայնածավալ պարերազմը ըստ էության, այսօր էլ կա, չնայած ոչ հավասարազոր ուժով: Ադրբեջանական կողմը էթիկայի առումով արգելքներ չի ձանաչում: Իմ ելույթում ես բազմաթիվ փաստեր

նշեցի, որոնք ցույց էին տալիս, որ մեր հարեանները ոչնչի առջեւ կանգ չեն առնում հայ ժողովրդին ամենավիրավորական, հայիոյական խոսքերով որակելու համար: Այսպես օրինակ, հեռուստաբեմին մի հաղորդման մեջ ներկայացվում էր մանկավարժի առօրյան: Ադրբեջանցի դաստիարակչուհին հարցնում է իր սաներին «Երեխաներ, ովքեր են մեր թշնամիները»: 2-5 տարեկան փոքրիկները միաձայն կանչում են «հայերը»: Անշուշտ, մեծերն են նրանց սովորեցրել: Մարտափելին հաջորդ հարցն էր «Ի՞նչ պետք է անել թշնամիներին»: Երեխաները կրկին միաձայն բացականչում են «սպանել»:

Ես մեր անդրբեջանցի գործընկերներին ասացի այսպիսի քարոզչությունը վնաս է բերում

առաջին հերթին ձեր ազգին, որովհետեւ դուք դաստիարակում եք մարդասպան սերունդ:

- Ի դեպ այդ հաղորդումը լրագրողների մի խմբով քննարկել ենք եւ եկել այն ճարակացության որ հայերն այդպես չպետք է վարվենք:

- Որովհետեւ երեխան, հայ թե ադրբեջանցի, մաքուր հոգով է ծնվում: Մեծերս ենք նրանց այդպիսին դարձնում: Եվ ադրբեջանցի լրագրողները եւս ընդունեցին, որ քարոզչության այդ ձեւը ճիշդ չէ:

Հանդիպման բոլոր մասնակիցները այն կարծիքին էին, որ քարոզչական այդ արշավը պետք է ավարտել: Այնուամենայնիվ, առաջին իսկ օրը ԼՂՀ-ն նշվեց ոչ իբրեւ հավասար կողմ: Մյուստե ասվեց հանդիպմանը մասնակցում են Հայաստանը, Ադրբեջանը, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղը: Դա մեզ համար անընդունելի էր եւ մենք մերժեցինք այդ ձեւակերպումը: Որովհետեւ մենք «ինչպես նաեւ» չենք պայքարող կողմն ենք, հեղեւաբար հավասար կողմը: Ցավոք այդ ձեւակերպումը տեղ գտավ նաեւ վերջնական փաստաթղթում, որը որպես հայտարարություն պարտապարտել էր լրագրողների հա-

մար: Մենք այն բնականաբար չստորագրեցինք: Ընդհանուր առմամբ փաստաթուղթը ընդունելի էր քանի որ կոչ էր անում դարեցնել լրագրական հակամարտությունը եւ թշնամու կերպարի բորբոքումը որոնք միայն հանգեցնում են վիճակի վարքարկացմանը: Սակայն մեր դիրքորոշումն այն էր, որ ԼՂՀ-ը համարվի հանդիպման հավասար կողմ: Հայտարարության տեքստը չարդարացրեց այդ սպասումը:

- Գոնե լրագրողները պետք է ավելի համարձակ լինեին Ուրեմն, 88-ից ի վեր ոչինչ չի փոխվել:

- Դժբախտաբար, Արցախը լրագրողների համար մնում է իբրեւ շահեկան թեմա, նրանց ցավը չի դարձել: Այս ամենով հանդերձ, մոսկովյան հանդիպումն օգտակար էր ձեռք բերված պայմանավորվածությամբ, որ հայկական եւ ադրբեջանական մամուլի էջերն ու եթերը այլեւս չեն լցվի փոխադարձ վիրավորանքներով եւ արելությամբ: Չորսամսյա զինադադարը վկայում է, որ խաղաղություն կարող է իշխել նաեւ լրագրության մարզում:

Հարցազրույցը վարեց
ՀՐԱՇՈՒՀԻ ՓԱՆՆԵՂՈՒԹՅԱՆԸ